Երանի

Կաթիլ կաթիլ անձրեւ կու գայ,
իսկ խխունջիկը՝
Խուճկուլուլուն
տրտո՞ւմ տխուր կը սողայ...

Ինչո՞ւ համար իր ընկերը՝
Թրթուրիկ Թութուպան
մէկ երկու, երեք չորս,
հինգ վեց, եօթը ութը,
ինը տասը,
տասը եւ վեց,
տասնվե՜ց հատ
տոտիկ ունի,

իսկ ինքը
տոտիկ չունի...
Ո՛չ մէկ տոտիկ...

Անտրամաբանական...
Անտրամաբանական...

Թրթուրիկ Թութուպան
կը բացատրէ
թէ՝
տասը եւ վեց,
տասնվեց հատ տոտիկ ունենալը
դիւրին բան չէ՛...

Ընդհակառակը,
շա՛տ դժուար է,
գլխու ցա՛ւ է...
Մէկ երկու,
ա՞ս տոտիկը առջեւ դնէ...
Երեք չորս,
ա՞ն տոտիկը առջեւ դնէ...

Հինգ վեց,
աջը ձախը...
Եօթը ութը,
հաշի՛ւ ըրէ...
Ինը տասը,
վա՛յ սխալ է,
հանգո՛յց է...

Հանգոյցը
ինչպէ՞ս քակէ,
շա՛տ դժուար է...
Ասի կեա՞նք է...

Կաթիլ կաթիլ անձրեւ կու գայ,
իսկ խխունջիկը՝
Խուճկուլուլուն
տրտո՞ւմ տխուր կը սողայ...

Ինչ լա՛ւ կ՚ըլլար
Թրթուրիկ Թութուպան
քանի մը տոտիկ
իրե՛ն տար...

Խուճկուլուլուին՝
վե՛ց տոտիկ,
Թութուպային՝
տա՛սը տոտիկ,
կ՚ըլլային
երկո՛ւ ընկեր
երջանի՛կ...

Երանի՜...